

ք.Ալավերդի,
31.10.2016թ.
Ելք № 056

ԱԼԱՎԵՐԴՈՒ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆԻ
ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
տկն. Ա. ԷՎՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Էվոյան,

Ի պատասխան Ալավերդի քաղաքի վրա այսօր՝ 31.10.2016թ. տարածված մշուշի վերաբերյալ Ձեր հարցմանը, տեղեկացնում ենք, որ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերության Ալավերդու պղնձածուլական գործարանի արտանետումների ծավալը և բաղադրությունը չի փոխվել՝ համեմատած նախորդ ամիսների հետ:

Անհրաժեշտ է փաստել, որ այսօր Ալավերդում, ինչպես նաև հանրապետության այլ բնակավայրերում նկատվում է բարձր ամպամածություն և մշուշ: Ինչպես երևում է նկարներից (հատկապես այն նկարը, որտեղ երևում է գործարանի ծխնելույզը), գործարանի արտանետումը չի նստում քաղաքի վրա, այլ ուղիղ վեր է բարձրանում:

Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ մթնոլորտային ճնշման փոփոխության, խոնավության ավելացման և ջերմաստիճանի անկման պարագայում չի բացառվում, որ մշուշի մեջ կարող է զգացվել նաև ծծմբային անհիդրիդի հոտը:

Մեկ անգամ ևս հրավիրում ենք Ձեր ուշադրությունն այն հանգամանքին, որ պղնձածուլական գործարանի արտանետումների քանակական և որակական փոփոխություններ տեղի չեն ունեցել և որոշ բացասական երևույթներ կարող էին պայմանավորված լինել միմիայն եղանակային պայմաններով:

Հարգանքով՝



Լուսինե Մեջլումյան
Տնօրեն